

- (77-78) 5 ժամյա ծանր ֆիզիկական աշխատանքի ընթացքում մարդու սիրտը շրջանառության  
է մղել 6300լ արյուն: Ըստունել, որ ծանր ֆիզիկական աշխատանքի ընթացքում  
սիստոլային ծավալը մեծացել է 1.5անգամ, իսկ սրտի կծկումների  
հաճախականությունը՝ 1.25 անգամ:

77

Ռոպեում քանի<sup>o</sup> անգամ է կծկում մարդու սիրտը հարաբերական հանգստի  
վիճակում, եթե սիստոլային ծավալը հանգիստ վիճակում 70մլ է:

## ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2012

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

78

10 ժամում քանի<sup>o</sup> լիտր արյուն են ստացել երիկամները, եթե մարդը 5 ժամ կատարել է  
ծանր ֆիզիկական աշխատանք և 5 ժամ գտնվել է հարաբերական հանգստի  
վիճակում:

**ԹԵՍ 5**

Խնդի համարը

Նստարանի համարը

- (79-80) Փորձերը ցույց տվեցին, որ 1200 նուկլեոտիդներից քաղկացած ի-Ղ-ՆԹ-ի մոլեկուլում  
նուկլեոտիդների 27%-ը աղենինային է, 15%-ը գուանինային, 18%-ը՝ ուրացիլային:

79

Գտնել ցիտոզինային նուկլեոտիդների քանակը ի-Ղ-ՆԹ-ում:

### Հարգելի՝ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարրերակը,  
որը Զեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան  
մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր  
կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկող  
տարրերակները: Եթե Զեր չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել,  
ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց քողմել և դրան անդրադառնալ ավելի  
ուշ:

80

Գտնել թիմինային նուկլեոտիդների քանակը Ղ-ՆԹ-ում:

Զեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք  
օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն  
պատասխանների ձևարությունը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանար պատասխանները ուշադիր և  
խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է  
կախված Զեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Որտե՞ղ են քլորոֆլաստները հատկապես շատ:

- 1) տերևամաշկի բջիջներում
- 2) տերևամսի այունաձև բջիջներում
- 3) տերևամսի սպունգաձև բջիջներում
- 4) տերևամաշկի միջրջային տարածություններում

2 Հատկապես ցողունի ո՞ր մասում են գտնվում մադաննան խողովակները:

- 1) լուրում
- 2) խցանում
- 3) միջուկում
- 4) բնափայտում

3 Ի՞նչն է առաջանում ծածկասերմ բույսերի բեղմնավորված ձվաբջջից:

- 1) սերմը
- 2) սաղմը
- 3) էնդոսպիրմը
- 4) սերմնարանը

4 Ինչի՞ց են կազմված վեգետատիվ բողոքները:

- 1) աճման կոնից, սաղմնային ցողունիկից և սաղմնային տերևիկներից, սաղմնային ծաղիկներից
- 2) աճման կոնից, սաղմնային ծաղկաբույլից, սաղմնային տերևիկներից, բողոքային թեփուկներից
- 3) արմատից, ցողունից, սաղմնային տերևիկներից, բողոքային թեփուկներից
- 4) աճման կոնից, սաղմնային ցողունիկից, թեփուկներից, սաղմնային տերևիկներից

5 Մնակերի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Բջիջների մակերևույթային շերտը գլիկոլալիքսն է:
- 2) Արտազատում են միզանյոթ:
- 3) Ավտոտրոֆ օրգանիզմներ են:
- 4) Ունեն քլորոֆիլի հատիկներ:

6 Ինչպե՞ս է կատարվում սպիտակ պլանարիայի օրգանիզմից սննդի շնարաված մնացորդների հեռացումը:

- 1) հետանցրով
- 2) բերանային անցրով
- 3) արտազատող անցրով
- 4) մարմնի ամրող մակերեսով

7 Որտե՞ղ են բացվում մալպիզյան անոքները հիմքերով:

- 1) մարմնի խոռոչում
- 2) արտաքին միջավայրում
- 3) ճարպային մարմնում
- 4) հետմանու սկզբնամասում

74 Գտնել էներգիայի կորուստը անթրվածին փուլում:

75 Գտնել էներգիայի կորուստը թթվածնային փուլում:

76 Որքա՞ն օգտակար էներգիա է պահեստավորվել անթրվածին փուլում:

(71-73 ) Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացել է 90 մոլ CO<sub>2</sub> և մնացել է 20 մոլ կարբոնաթթու:

71 Որոշեք ամբողջ պրոցեսի օգտակար գործողության գործակիցը (%-ով):

- 1) 53.64
- 2) 48.7
- 3) 47.68
- 4) 55.3

72 Քանի՞ զրամ քրտինք է գոլորշիացել մարմնի մակերևույթից, եթե գոլորշիացման համար ծախսվել է գլյուկոզի ճեղքման պրոցեսի արդյունքում անջատված ջերմային էներգիայի 20%-ը: 1գ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՋ էներգիա:

- 1) 4080
- 2) 2625
- 3) 2305.62
- 4) 1665.31

73 Որոշեք քանի՞ մոլ գլյուկոզ է ճեղքվել:

- 1) 10
- 2) 15
- 3) 20
- 4) 25

8 Ի՞նչերն են բացվում գորտի կոյանոցի մեջ:

- 1) բարակ աղին, ենթաստամոքսային գեղձի ծորանը և միզածորանները
- 2) լեղածորանը և միզածորանները
- 3) հետնաղին, միզածորանները և սեռական գեղձերի ծորանները
- 4) լեղածորանը, ենթաստամոքսային և սեռական գեղձերի ծորանները

9 Ի՞նչը բնորոշ չէ տաքարյուն կենդանիներին:

- 1) մեծ քանակությամբ էներգիայի անջատումը
- 2) նյութափոխանակության դանդաղ ընթացքը
- 3) մարմնի կայուն ջերմաստիճանը
- 4) թթվածնով հագեցած արյունը

10 Թոշումների ո՞ր ամենազարգացած մկաններին է պատկանում թռչքի ժամանակ քերի իջեցման հիմնական դերը:

- 1) միջկողային
- 2) կրծքային մեծ
- 3) ենթանրակային
- 4) բազուկների փորք

11 Ի՞նչ է նկատվում մարդու վեգետատիվ նյարդային համակարգի սիմպաթիկ բաժնի գրգռման դեպքում:

- 1) սրտի կծկման ուժի մեծացում
- 2) միզապարկի պատի մկանների կծկում
- 3) ստամոքսահյութի արտազատման խթանում
- 4) մարսողական համակարգի սեղմանների բուլացում

12 Ի՞նչ կղիտվի մարդու միջին ուղեղի վնասման դեպքում:

- 1) մատների նուրբ շարժումների խանգարում
- 2) շնչառության հաճախացում
- 3) ցավի զգացողության խանգարում
- 4) մարսողական համակարգի գործունեության խանգարում

13 Մարդու օրգանիզմում ո՞ր քջինների կողմից է արտադրվում աղբենալինը:

- 1) վահանագեղձի հետին բլթի
- 2) մակերիկամների կեղևային շերտի
- 3) մակերիկամների միջուկային շերտի
- 4) ենթաստամոքսային գեղձի կղզյակների

14 Ի՞նչն է բնորոշ մարդու հասուն լեյկոցիտներին:

- 1) ունեն հեմոգլոբին և անշարժ են
- 2) չունեն կորիզ և ընդունակ են ֆագոցիտոզի
- 3) չունեն կորիզ և ընդունակ չեն ֆագոցիտոզի
- 4) ունեն կորիզ և կատարում են ամերանման շարժումներ

15

**Ո՞ր ինունիտետն է առաջանում մարդու օրգանիզմում ծաղկով հիվանդանալուց հետո:**

- 1) բնական բնածին
- 2) բնական ձեռքբերովի
- 3) արիեստական ակտիվ
- 4) արիեստական պասիվ

16

**Ի՞նչ է տեղի ունենում մարդու աջ նախասիրտ մտնող արյան քանակության նվազման դեպքում:**

- 1) թուլանում են սրտի կծկումները
- 2) նվազում է դեպի արյան շրջանառության մեծ շրջան մղվող արյան ծավալը և դանաղում արյան հորբն անորթներով
- 3) սիմպաթիկ նյարդերով եկող ազդակները սեղմում են արյունատար անորթները և ուժեղացնում սրտի աշխատանքը
- 4) երկարավուն ուղեղից բափառող նյարդով ազդակներ են ուղարկվում դեպի սրտի հանգույցներ և սրտի աշխատանքը դանաղում է՝ սիրտը հասցնում է լցվել

17

**Մարդու օրգանիզմում ի՞նչն է բնորոշ լեզուն:**

- 1) արտադրվում է լեղապարկում
- 2) խթանում է նեխսան զործընթացները
- 3) թուլացնում է աղիների շարժողական ակտիվությունը
- 4) նպաստում է ճարպալուծ վիտամինների ներծծմանը

18

**Ի՞նչ տեղի չի ունենում մարդու օրգանիզմում միջավայրի ջերմաստիճանի բարձրացման դեպքում:**

- 1) մեծանում է մաշկի արյան անորթներ մղվող արյան քանակը
- 2) մաշկի արյան անորթները լայնանում են
- 3) քրտնարտադրությունն ուժեղանում է
- 4) ջերմատվյունը նվազում է

19

**Ի՞նչ է իրենից ներկայացնում բորամիզը:**

- 1) հարթ էնդոքելային հյուսվածքի երկու շերտ
- 2) շարակցական հյուսվածքի ամուր թաղանք
- 3) միաշերտ էպիթելային հյուսվածքի երկու շերտ
- 4) հարթ մկանահյուսվածքի նուրբ թաղանք

20

**Մարդու օրգանիզմում որտե՞ղ են սինթեզվում տեսողական գունակները:**

- 1) շաղկապենու բջիջներում
- 2) ցանցաբանթի բջիջներում
- 3) ծիածանաբաղանթի բջիջներում
- 4) սպիտակուցային թաղանթի բջիջներում

21

**Ի՞նը բնորոշ չէ առողջ մարդու միզարծակմանը:**

- 1) Կծկում են սեղմանների մկանները:
- 2) Սիզագոյացումը տեղի է ունենում անընդհատ:
- 3) Սիզարձակումը կատարվում է պարբերաբար:
- 4) Կծկում են միզապարկի պատերի մկանները:

68

**Ո՞ր շարքում են նշված բոլոր սիսալ պնդումները:**

- A. Ցիտոպլազմային ժառանգականությունը կապված է քլորոպլաստների և միտոքոնդրիումների ԴՆԹ-ի հետ:
  - B. ԴՆԹ-ի թելի մեջ նուկլեոտիդներն իրար միանում են մեկ նուկլեոտիդի ածխաջրի և հարևան նուկլեոտիդի ֆոսֆորաթթվի միակցման միջոցով:
  - C. Դրոզդիլի աչքի գույնն առտոսումային հատկանիշ է և այն պայմանավորող գենը գտնվում է X-քրոմոտոմում:
  - D. Քլորոպլաստների միտոքոնդրիումների գեները հիմնականում ժառանգվում են մայրական գծով:
  - E. ԴՆԹ-ի մոլեկուլում Ա-ն կապված է Թ-ի հետ 3, իսկ Գ-ն Ց-ի հետ 2 ջրածնային կապերով, որոնք նպաստում են ժառանգական տեղեկատվության պահպանմանը:
  - F. Ցիտոպլազմային ժառանգականությունը պայմանավորող արտակորիզային գենների գործունեությունն, ընդհանուր առմամբ, գտնվում է կորիզային գենում կարգավորման տակ:
- 1) CE
  - 2) ABDF
  - 3) BE
  - 4) ACEF

(69-70) Մարդու դալտոնիզմ պայմանավորող ռեցեսիվ գենը(d) գտնվում է X-քրոմոտոմում, իսկ երկնագույն աչքերը ժառանգվում են որպես առտոսումային ռեցեսիվ հատկանիշ(ա): Շազանակագույն աչքերով նորմալ գունային տեսողությամբ ամուսինների ընտանիքում ծնվել են երկու երեխաներ, որոնցից մեկը դալտոնիկ է և ունի երկնագույն աչքեր:

69

**Որոշեք ծնողների գենոտիպերը:**

- 1)  $AaX^DX^d$  և  $AaX^dY$
- 2)  $AaX^DX^d$  և  $AaX^DY$
- 3)  $AaX^DX^D$  և  $AAAX^DY$
- 4)  $AAAX^DX^d$  և  $aaX^DY$

70

**Որոշեք, ըստ աչքերի գույնը պայմանավորող գեների հոմոզիգոտ երեխա ծնվելու հավանականությունը:**

- 1) 1/2
- 2) 1/4
- 3) 3/16
- 4) 9/16

65

**Ո՞ր շարքում են նշված բոլոր սխալ պնդումները:**

- A. Սողունների մաշկը չոր է, գրեթե զուրկ գեղձերից:
  - B. Օղակավոր որդերն ունեն փակ արյունատար համակարգ:
  - C. Կարնասուններն ունեն առրտայի ձախ աղեղ:
  - D. Գորտի հետսաղմնային զարգացումը ուղղակի է, ինչն ապահովում է արագ հասունացումը և բազմացումը:
  - E. Պլանարիայի մարտողության համակարգը հետ է զարգացել մակարույժ կենսակերպի հետևանքով:
  - F. Բոլոր միջատների հետսաղմնային զարգացումն ընթանում է լրիվ կերպարանափոխությամբ, որի շնորհիվ միջատները կազմում են կենդանի օրգանիզմների ամենաբազմատեսակ խումբը:
- 1) DEF
  - 2) ACE
  - 3) BDF
  - 4) ABC

66

**Ո՞ր շարքում են նշված բոլոր սխալ պնդումները:**

- A. Զրում լավ լուծվող նյութերը կոչվում են հիդրոֆիլ:
  - B. Ուկրային հյուսվածքի դիմացկունությունն ու պնդությունը ապահովում է կալցիումի ֆոսֆատով:
  - C. Փափկամարմնների խեցիների դիմացկունությունն ու պնդությունը ապահովում է կալցիումի կարբոնատով:
  - D. Բջջի մեջ նատրիումի կոնցենտրացիան բավական բարձր է, իսկ կալիումին՝ ցածր:
  - E. Բջջի մահից հետո խոնների պարունակությունը բջջում և միջավայրում արագորեն հավասարվում է:
  - F. Կատիոնների և անիոնների կոնցենտրացիան բջջում և նրա շրջապատում, որպես կանոն, միշտ հավասար են:
  - G. Ցանկացած բջջի ռեակցիա թույլ թթվային է, համարյա չեղոք:
  - H. Բջջի մեջ նատրիումի կոնցենտրացիան բավական ցածր է, իսկ կալիումին՝ բարձր:
- 1) ABCEH
  - 2) ABF
  - 3) BCDEG
  - 4) DFG

67

**Ո՞ր շարքում են նշված բոլոր սխալ պնդումները:**

- A. Կոնսումենտներին բնորոշ է սնուցման ավտոտրոֆ եղանակը:
  - B. Արոնորֆոգներն օրգանիզմների մասնավոր հարմարանքներ են, որոնք նպաստում են բնակության միջավայրի որոշակի պայմաններին հարմարվելուն:
  - C. Էկոհամակարգը միմյանց հետ փոխագրող կենդանի օրգանիզմների և միջավայրի անօրգանական բաղադրիչների ամբողջությունն է, որում պահպանվում է նյութերի անընդհատ շրջապատույթը և էներգիայի հոսքը:
  - D. Կենսաերկրացենոզների մեծ մասի էներգիայի հիմնական աղբյուրն այն էներգիան է, որն անջատվում է առանձին օրգանական նյութերի քայլայման ընթացքում:
  - E. Կենսաերկրացենոզի էներգիայի հիմնական աղբյուրը որոշ անօրգանական նյութերի ճեղքման արդյունքում անջատվող էներգիան է:
  - F. Պրոդուցենտները պարզ անօրգանական միացություններից սինթեզում են օրգանական միացություններ:
- 1) ABDE
  - 2) CF
  - 3) ACDF
  - 4) BC

22

**Ի՞նչ է առաջանում մարդու օրգանիզմում Ա վիտամինի անբավարարության դեպքում:**

- 1) շարորակ սակավարյունություն
- 2) մաշկի արյունագեղրումներ
- 3) ոսկրերի ածի արագացում
- 4) աղիների վնասում

23

**Ինչո՞ւ է ապահովվում սպիտակուցի երկրորդային կառուցվածքի կայունությունը:**

- 1) պոլիպեպտիդային շղթայի ամինաթթուների միջև ջրածնային կապերով
- 2) տարրեր պոլիպեպտիդային շղթաների լիցքավորված խմբերի միջև էլեկտրաստատիկ փոխազդեցություններով
- 3) պոլիպեպտիդային շղթայի իդրոֆոր ամինաթթուների կողմնային ռադիկալների փոխազդեցություններով և երկուլիդիային կապերով
- 4) պոլիպեպտիդային շղթայի ամինաթթուների միջև պեպտիդային կապերով

24

**Որտե՞ղ են սինթեզվում լիզոտոմների ֆերմենտները:**

- 1) միտոքոնոպրիումներում
- 2) բջջային կենտրոնում
- 3) ռիբոսումներում
- 4) բջջակորիգում

25

**Ինչի՞առկայությամբ են կորիզավորները (էուկարիոտները) տարրերվում նախակորիզավորներից (պրոկարիոտներից):**

- 1) ԴՆԹ-ի մոլեկուլի
- 2) ցիտոպլազմայի
- 3) ռիբոսումների
- 4) կորիզի

26

**Ո՞ր բաղադրիչներն են մտնում կորիզի կազմի մեջ:**

- 1) բջջաթանձր, ԴՆԹ-ի մոլեկուլները և միտոքոնոպրիումները
- 2) երկշերտ թաղանթը, ռիբոսումները և ԴՆԹ-ի մոլեկուլները
- 3) կորիզակը, կորիզայութը, էնդոպլազմային ցանցը և ԴՆԹ-ի մոլեկուլները
- 4) երկշերտ թաղանթը, ԴՆԹ-ի մոլեկուլները, կորիզայութը և կորիզակը

27

**Ի՞նչն է հանդիսանում էներգիայի անմիջական աղբյուր ֆոտոսինթեզի ժամանակ ԱԵՖ-ի առաջացման համար:**

- 1) արեգակնային լույսը
- 2) քլորոֆիլի գրգռված էլեկտրոնի անցումը թաղանթով
- 3) նիստերում պարփակված ջրածնի իոնների անցումը թաղանթով
- 4) ջրածնի ատոմը, որի փոխադրիչ մոլեկուլին միանալու արդյունքում անջատվում է էներգիա

28

**Ո՞ր շարքի բոլոր միացություններն են առաջանում գլուկոզի անբթվածին ճեղքման աղյունքում:**

- 1) ԱԵՖ, ածխածնի (IV) օքսիդ, ջուր, թթվածին
- 2) ջրածին, ԱԿՖ, ածխածնի (IV) օքսիդ
- 3) ԱԿՖ, ֆոսֆորական թթու, կարնաթթու
- 4) կաթնաթթու, ԱԵՖ, ջուր

**29** Որտե՞ղ է տեղի ունենում ջրածնի ատոմների օքսիդացումը գլյուկոզի քրվածնային ճեղքման ժամանակ:

- 1) ցիտոպլազմայում
- 2) քլորոպլաստների ներքին թաղանթներում
- 3) միտոքոնդրիումների ներքին թաղանթում
- 4) միտոքոնդրիումների արտաքին թաղանթում

**30** Սիսոզի ո՞ր փուլում են քրոմոսոմները դասավորվում իլիկի հասարակածային հարթության վրա և ամրանում իլիկի թելիկներին:

- 1) պրոֆազում
- 2) մետաֆազում
- 3) անաֆազում
- 4) թելոֆազում

**31** Ի՞նչ են ուղղորդող մարմնիկները:

- 1) խոշոր դիպլոիդ բջիջներ
- 2) փոքր հավլուիդ բջիջներ, որոնք ոչնչանում են
- 3) հասունացման գոտի չանցած սպերմատոզոնիդներ
- 4) աճման գոտի չանցած սկզբնական սեռական բջիջներ

**32** Սեյոզի ո՞ր փուլում են դրստր քրոմատիդները տարամիտվում դեպի բջջի բևեռներ:

- 1) առաջին բաժանման անաֆազում
- 2) առաջին բաժանման պրոֆազում
- 3) երկրորդ բաժանման անաֆազում
- 4) երկրորդ բաժանման պրոֆազում

**33** Ինչի՞ միջոցով է կատարվում հատկանիշների և զարգացման առանձնահատկությունների ժառանգումը:

- 1) բազմացման
- 2) ընտրության
- 3) փոփոխականության
- 4) հարմարվողականության

**34** Երկու հետերոզիզոտ առանձնյակների միահիմքային խաչասերման արդյունքում, լիկվ դոմինանտության դեպքում, սերնդում քանի՞ ֆենոտիպային խումբ է ստացվում:

- 1) մեկ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

**35** Ի՞նչ գենոտիպեր ունեն ծնողական ձևերը, եթե երկիրքի խաչասերումից ստացված սերնդում, երկու ալելով էլ ոչ լրիվ դոմինանտության դեպքում, դիտվում է 1:1:1:1 ճեղքավորում ըստ ֆենոտիպի:

- 1) AABB և aabb
- 2) AABb և AAbb
- 3) aaBb և aabb
- 4) AaBb և aabb

**62** Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները:

- A. Արտաքինից միանման և միևնույն ֆունկցիա կատարող, բայց տարրեր ծագում ունեցող օրգանները կոչվում են հոմոլոգ օրգաններ:
  - B. Ատավիզմները որոշ առանձնյակների նախնիների հատկանիշներին վերադառնալու դեպքեր են:
  - C. Նման կառուցվածք և ընդհանուր ծագում ունեցող օրգանները, անկախ նրանց կատարած ֆունկցիաներից կոչվում են անալոգ:
  - D. Թիթեղի և չղջիկի թևերը հոմոլոգ օրգաններ են:
  - E. Մարդու ականջային մկանները, երրորդ կոպը ոռողիմենտ օրգաններ են:
  - F. Ոլորի թեղիկները, կակտուայի փշերը հոմոլոգ օրգաններ են:
  - G. Ռուդիմենտները ծևավորվում են սաղմնային զարգացման ընթացքում, հետագայում դադարում են զարգանալ և հասուն օրգանիզմների մոտ չեն գործում:
- 1) ACD
  - 2) ADEG
  - 3) BEFG
  - 4) BCF

**63** Ո՞ր շարքում են բերված միջտեսակային գոյության կովին համապատասխանող բոլոր ճիշտ օրինակները:

- A. Թոշունները սովորեցնում են ձագերին թռչել:
  - B. Երաշտահավերը կոխսուելով ոչնչացնում են իրենց ձագերի մի մասին:
  - C. Գայլերը հետապնդում են որսին և հոշոտում:
  - D. Արուները պայքարում են էգի համար:
  - E. Պալարարակտերիաները բնակվում են բարձրակարգ բույսերի արմատների վրա:
  - F. Սիջատները սնվում են ծաղկի նեկտարով:
  - G. Գորշ առնետը Եվրոպայից դուրս է մղել սև առնետին:
- 1) ABC
  - 2) CEFG
  - 3) ABDE
  - 4) CDG

**64** Ո՞ր շարքի բոլոր պնդումներն են սխալ:

- A. Որքան կարճ են ձայնալարերը, այնքան փոքր է տատանման հաճախությունը:
  - B. Լռելիս ձայնալարերը մոտենում են իրար:
  - C. Ներշնչվող օդում թթվածնի պարունակությունը կազմում է 16.3%, իսկ ածխաքրու զագինը՝ 4%:
  - D. Վերին ազատ վերջույթների կմախքը կազմված է բազկի, նախարազկի, ձեռքի ուլուկներից:
  - E. Ուսագոտու ուլուկներն են անբակները և թիակները:
  - F. Ոչ պայմանական ուժիքսների իրականացմանը մասնակցում են ողնուուղը և ուղեղաքրունը:
  - G. Ոչ պայմանական ուժիքսների իրակնացման համար պարտադիր է գլխուղեղի մեծ կիսագնդերի մասնակցությունը:
- 1) AEF
  - 2) ABCG
  - 3) BCDG
  - 4) DEF

60

**Ո՞ր շարքում են նշված մուտացիաների վերաբերյալ բոլոր ճիշտ պնդումները:**

- A. Տրամալկացիայի դեպքում տեղի է ունենում ոչ հոմոլոգ քրոմոսոմների միջև հատվածների փոխանակում:
  - B. Կենդանիների սոմատիկ մուտացիաները առաջանում են գամետներում և փոխանցվում են հաջորդ սերունդներին:
  - C. Մուտացիաների զգալի մասը ֆենոտիպորեն չի դրսուրվում սերնդում, քանի որ դրանք կրում են ռեցեսիվ բնույթ :
  - D. Մուտացիաների կուտակումը պոպուլյացիայում տեղի է ունենում շնորհիվ նրա, որ պոպուլյացիայի թվաքանակը մշտապես փոփոխվում է:
  - E. Սոլիֆիկացիոն փոփոխականությունը համարժեք է բնակության միջավայրին և դրսուրվում է ռեակցիայի նորմայի սահմաններում:
  - F. Ի տարրերություն մուտացիոն փոփոխականության մոդիֆիկացիոն փոփոխականությունը չունի զանգվածային բնույթ:
  - G. Գենոմային մուտացիաների հետևանքով մեծանում կամ փոքրանում է քրոմոսոմների հավաքակազմը:
- 1) ACEG  
2) BCDE  
3) BDF  
4) AFG

61

**Ո՞ր շարքի բոլոր պնդումներն են ճիշտ:**

- A. Սենդելի առաջին օրենքը պնդում է, որ առաջին սերնդի հիբրիդների խաչաերման կամ ինքնափոխուման արդյունքում ի հայտ է գալիս ճեղքավորում:
  - B. Տարրեր օրգանիզմներում նույն հատկանիշի արտահայտումը վերահսկող գեները կոչվում են ալելային:
  - C. Հոմոլոգ քրոմոսոմներում միևնույն գենի տարրեր ալելներ պարունակող առանձնյակը կոչվում է այդ գենով որոշվող հատկանիշի նկատմամբ հոմոզիգոն առանձնյակ:
  - D. Գենոմը տվյալ տեսակին պատկանող օրգանիզմների քրոմոսոմների հապլոիդ հավաքի ԴՆԹ-ի մոլեկուլների ամբողջությունն է:
  - E. Ռեցեսիվ հատկանիշը կարող է դրսուրվել այն դեպքում, եթե համապատասխան լոկուսներում առկա են զույգ ալելային ռեցեսիվ գեները:
  - F. Ֆենոտիպը օրգանիզմների բոլոր հատկանիշների ամբողջությունն է:
  - G. Ծղբայակցման խմբերի քանակը հաստատուն է օրգանիզմների տվյալ տեսակի համար և հավասար է քրոմոսոմների հապլոիդ հավաքին:
- 1) BCF  
2) ACDE  
3) ABC  
4) DEFG

36

**Ինչպես է դրսուրվում առտոտումում տեղակայված ռեցեսիվ գենով պայմանավորվող հիվանդությունը:**

- 1) փոխանցվում է հիմնականում աղջկմերին
- 2) փոխանցվում է հիմնականում տղաներին
- 3) դրսուրվում է հոմոզիգոտ վիճակում ցանկացած սերնդում
- 4) դրսուրումը հնարավոր չէ երեխաների մոտ, որոնց ծնողներն առողջ են

37

**Ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Օրգանիզմի ֆենոտիպը ձևավորվում է գենոտիպի և կենսամիջավայրի պայմանների փոխազդեցության արդյունքում:
- 2) Սեռը, որն ըստ սեռական քրոմոսոմների առաջացնում է մեկ տեսակի գամետներ, հոմոգամետ է:
- 3) Մեկ քրոմոսոմում գտնվող գեները մեյօզի արդյունքում ընկնում են մեկ գամետի մեջ:
- 4) Վերլուծող խաչաերման դեպքում ամեայտ գենոտիպ ունեցող առանձնյակը խաչաերում են դոմինանտ գենով հետերոզիգոտ առանձնյակի հետ:

38

**Ի՞նչն է բնորոշ ֆենոտիպային փոփոխականությանը:**

- 1) Առաջացած փոփոխություններն առաջանում են հանկարծակի, բոիչքածե, ոչ ուղղորդված:
- 2) Առաջացած փոփոխությունները չեն փոփոխացվում են սերունդներին:
- 3) Առաջացած փոփոխությունները կապված են գենոտիպի փոփոխման հետ:
- 4) Առաջացած փոփոխությունները մուտացիաների արդյունք են:

39

**Ի՞նչն է առավել բնորոշ քրոմոսոմային մուտացիաներին:**

- 1) քրոմոսմի հատվածի  $180^{\circ}$  շրջումը
- 2) գեներում ԴՆԹ-ի առաջնային կառուցվածքի փոփոխությունները
- 3) քրոմոսմների քանակի ոչ բազմապատիկ անգամ փոփոխումը
- 4) քրոմոսմների հապլոիդ քանակի բազմապատիկ անգամ մեծացումը

40

**Ի՞նչն է ընկած տեսակի կենսաքիմիական չափանիշի հիմքում:**

- 1) մի տեսակի առանձնյակների ներքին և արտաքին կառուցվածքի նմանությունը
- 2) տեսակների կարիոտիպերի տարրերությունը, բազմացման նմանությունը
- 3) տեսակների տարրերակումն ըստ որոշակի սպիտակուցների և նուկլեինաթթուների կառուցվածքի և կազմի
- 4) մի տեսակի առանձնյակների կենսագործունեության գործընթացների նմանությունը

41

**Խայթից գուրկ ճանճերը շատ նման են խայթող միջատներ իշամեղուներին և կրետներին: Սա արտաքին միջավայրի պայմաններին օրգանիզմների հարմար-վածության ո՞ր ձևն է:**

- 1) միմիկրիա
- 2) հովանավորող գունավորում
- 3) նախազգուշացնող գունավորում
- 4) միջավայրի առարկաներին նմանվելու հարմարվածություն

42

Նշվածներից ո՞րը արտնորդողի օրինակ չէ:

- 1) ներքին բեղմնավորման ի հայտ գալը
- 2) կատվածկմերի մարմնի տափակության առաջացումը
- 3) բույսերի ֆոտոսինթեզի գործընթացի առաջացումը
- 4) միարժիշ օրգանիզմներից բազմարժիշ օրգանիզմների առաջացումը

43

Ո՞ր բակտերիաների կենսագործունեության արդյունքում են ազոտի միացությունները վերածվում մոլեկուլային ազոտի և արտազատվում մթնոլորտ:

- 1) ազոտ ֆիքսող
- 2) ամոնիֆիկացնող
- 3) նիտրիֆիկացնող
- 4) դենիտրիֆիկացնող

44

Քերպած էկոլոգիական գործոններից ո՞րն է մարդածին:

- 1) միջավայրի խոնավությունը
- 2) անտառների անհետացումը
- 3) հողի աղայնությունը
- 4) մուտուալիզմը

45

Ո՞ր օրգանիզմներն են ստեղծում էկոհամակարգի երկրորդային արտադրանքը:

- 1) պրոդրոցենտները
- 2) կոնսումենտները
- 3) պրոդրոցենտները և ռեդուցենտները
- 4) էկոհամակարգը կազմող բոլոր կենդանի օրգանիզմները

46

Օրգանիզմների միջև գոյություն ունեցող փոխհարաբերության ո՞ր ձևի դեպքում են երկու տեսակն էլ ստանում օգուտ և որի ժամանակ երկու փոխազդող տեսակների համատեղ կյանքը դառնում է անհրաժեշտ պայման յուրաքանչյուր տեսակի համար:

- 1) կոմենսալիզմ
- 2) ամենսալիզմ
- 3) մուտուալիզմ
- 4) կոռպերացիա

58

Ինչպիսի՞ն է բջջում սպիտակուցի կենսասինթեզի արոցեսների հաջորդականությունը:  
Ընտրեք ճիշտ պատասխանը:

- A. ի-ՈՆԹ-ի սինթեզ ԴՆԹ-ի վրա
- B. ամինաթթուների միացում փ-ՈՆԹ-ին
- C. ամինաթթվի փոխադրում ոիքրոսմ
- D. ի-ՈՆԹ-ի տեղաշարժ բջջակորիզից դեպի ոիքրոսմ
- E. ոիքրոսմի նատում ի-ՈՆԹ-ի վրա
- F. ամինաթթուներ կապած փ-ՈՆԹ-ի երկու մոլեկուլների միացում ի-ՈՆԹ-ի հետ
- G. ի-ՈՆԹ-ին միացած ամինաթթուների միջև փոխազդեցություն և պեպտիդային կապի առաջացում

- 1) DBACEFG
- 2) ABEDFCD
- 3) ADEBCFG
- 4) CEDBFGA

59

Ի՞նչ կառուցվածք ունի բջջաբաղանքը: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները:

- A. Կենդանական բջիջների բաղանքի արտաքին շերտը՝ գլիկոլալիքալ, կազմված է սպիտակուցներից և պոլիսախարիդներից, ստորին շերտը՝ պլազմային բաղանքը կազմված է լիպիդներից և սպիտակուցներից:
- B. Բույսերի, բակտերիաների, սնկերի, կենդանիների բջջապատը կազմված է բաղանքանյութից և բափանցելի է ջրի, աղերի և բոլոր օրգանական նյութերի լուծույթների համար:
- C. Բուսական բջիջների բաղանքի արտաքին շերտը պլազմային բաղանքն է, որն ապահովում է նյութերի փոխադրումը բջիջ և բջջի դուրս:
- D. Բույսերի, բակտերիաների և սնկերի բջիջների բջջաբաղանքի արտաքին շերտը բջջապատն է, որը կատարում է հենարանային և պաշտպանական ֆունկցիա, իսկ ստորին շերտը պլազմային բաղանքն է:
- E. Բույսերի բջիջների բջջաբաղանքի արտաքին շերտը բջջապատը հիմնականում կազմված է բաղանքանյութից, իսկ սնկերինը՝ խիտինից:
- F. Կենդանական բջիջների բաղանքի արտաքին շերտը կազմված է սպիտակուցներից և նուկլեինաթթուներից, որոնք ապահովում են ինֆորմացիայի փոխանցումը մի բջիջից մյուսին:
- G. Բակտերիաների բաղանքը նման է կենդանական բջիջների բաղանքին՝ ճկուն է, հեշտությամբ դեֆորմացվում է:

- 1) BCDG
- 2) ADE
- 3) CDEF
- 4) BCE

55

Ի՞նչ հաջորդականությամբ է ընթանում գորտի թոքերի օդափոխությունը: Ընտրեք ճիշտ պատասխանը:

- A. բերանակլանային խոռոչի հատակը բարձրանում է
- B. բերանակլանային խոռոչի հատակն իջնում է
- C. բերանակլանային խոռոչում ստեղծվում է նոսրացած տարածություն
- D. ողլ թոքերից դրւու է գալիս մարմնի պատերի և ներքին օրգանների մկանների կծկման շնորհիվ
- E. փակվում են քրանցքերի փականները
- F. ողլ մղվում է դեպի թոքերը
- G. ողլ քրանցքներով անցնում է բերանակլանային խոռոչ

- 1) AGEBCFD
- 2) DGEABCF
- 3) DACEGFB
- 4) BCGAEFD

56

Ինչպիսի՞ն է ձայնային ալիքի հաղորդման հաջորդականությունը՝ մարդու ականջում: Ընտրեք ճիշտ պատասխանը:

- A. ձվաձև պատուհանի թաղանթ
- B. թմբկաթաղանթ
- C. սալ
- D. արտաքին անցրուղի
- E. ասպանդակ
- F. խիսունջի հեղուկ
- G. մուրճ
- H. հիմային թաղանթ
- I. մազակազմ բջիջներ

- 1) DBCGEAFIH
- 2) BDEC GFHAI
- 3) DBGCEAFHI
- 4) IBGECADFH

57

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում այրոցեսները սննդի մարսման ընթացքում մարդու մարտղական համակարգում: Ընտրեք ճիշտ պատասխանը:

- A. սննդի տեղափոխում կերակրափողով
  - B. սննդանյութերի նեծծում բարակ աղիքում
  - C. սննդի բարդ օրգանական մոլեկուլների ճեղքում քրվային միջավայրում
  - D. սննդի մանրացում և մշակում բույլ հիմնային միջավայրում
  - E. ֆերմենտի ակտիվացում քրվի ազդեցությամբ
  - F. ջրի և հանքային աղերի ներծծում հաստ աղիքում
  - G. սննդանյութերի ճեղքում հիմնային միջավայրում
- 1) ADCEBFG
  - 2) DCEABGF
  - 3) DAECGBF
  - 4) GCAEBFD

(47-48) Էկոլոգիական համակարգում օրվա ընթացքում բույսերի կենսազանգվածը ավելացավ 2400 կգ-ով, բուսակեր կենդանիներինը՝ 120 կգ-ով, իսկ գիշատիչներինը՝ 12 կգ-ով:

47

Որոշեք առաջնային և երկրորդային արդյունավետությունները (կգ/ժամ) տվյալ էկոլոգիական համակարգում:

- 1) 100 և 5.5
- 2) 106 և 105.5
- 3) 105 և 5.5
- 4) 100 և 105.5

48

Սննդի զանգվածի ո՞ր նաև է կուտակվում տվյալ սննդան շղթայի յուրաքանչյուր օդակում, եթե լնդումնենք, որ օգտագործվում է ամբողջ կենսազանգվածը:

- 1) 5% և 10%
- 2) 5% և 20%
- 3) 10% և 20%
- 4) 10% և 15%

(49-50) Գենի երկարությունը 510 նմ է:

49

Որոշեք տվյալ գենի զանգվածը (ա.մ.-ով), եթե մեկ նուկլեոտիդի զանգվածը միջինում, կազմում է 300 ա.մ. իսկ նուկլեոտիդի երկարությունը՝ 0.34նմ:

- 1) 300
- 2) 3000
- 3) 900 000
- 4) 450 000

50

Զանի՞ րոպե է տևում տվյալ գենով կողավորվող սպիտակուցի սինթեզը:

- 1) 1.39 - 1.66
- 2) 99,8 - 83.17
- 3) 13.9 - 16.6
- 4) 4.17 - 5

**Բ մակարդակ**

51

- Կառուցվածքային ո՞ր առանձնահատկությունը (նշված է ձախս սյունակում) ծաղկավոր բույսերի ո՞ր դասին (նշված է աջ սյունակում) պատկանող բույսերի մեծ մասին է բնորոշ: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

Կառուցվածքի առանձնահատկություն

- A. սերմում պաշարանյութերը հիմնականում գտնվում են էնդոսպերմում
- B. ցողունում առկա է կամբիումի շերտը
- C. սերմնամաշկը հեշտ է անջատվում
- D. սերմում պաշարանյութերը հիմնականում գտնվում են շարիլներում
- E. ծաղկի անդամների թիվը բազմապատիկ է՝ 5-ի, հազվադեպ՝ 4-ի
- F. հիմնականում ունեն զուգահեռացիդ կամ աղեղնացիդ պարզ տերևներ

- 1) A-1; B-2; C-2; D-2; E-2; F-1
- 2) A-2; B-1; C-1; D-1; E-1; F-2
- 3) A-2; B-1; C-2; D-2; E-1; F-2
- 4) A-1; B-1; C-1; D-1; E-2; F-1

52

- Մարդու գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևում ո՞ր կենտրոնին, որ գոտուն (նշված է ձախս սյունակում) ո՞ր տեղակայումն է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

Կենտրոն, գոտի

- A. խոսրի շարժողական կենտրոն
- B. բառերի իմաստը հասկանալու կենտրոն
- C. գրելու կենտրոն
- D. կարդալու կենտրոն
- E. տեսողական գոտի
- F. հնտառական գոտի

- 1) A-2, B-1, C-2, D-3, E-4, F-1
- 2) A-1, B-1, C-2, D-2, E-1, F-4
- 3) A-1, B-3, C-4, D-3, E-2, F-2
- 4) A-2, B-1, C-3, D-4, E-4, F-4

53

Բջջի ո՞ր օրգանոփիյին (նշված է ձախս սյունակում) ո՞ր ֆունկցիան (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

Ֆունկցիա

Օրգանոփիյներ

- A. ժառանգական տեղեկատվության պահպանում և հաղորդում
- B. սպիտակուցի կենսասինթեզ
- C. մասնակցություն բաժանման իլիկի ձևավորմանը
- D. պլազմատիկ թաղանթի նորոգում ու աճ
- E. քիչներին էներգիայի ապահովում՝ ԱԵՖ-ի սինթեզ
- F. մեռած քջամասերի, օրգանների հեռացում
- G. քիչ ներքափանցած նյութերի ճեղքում

- 1) A-1, B-1, C-3, D-5, E-6, F-5, G-4
- 2) A-2, B-1, C-3, D-4, E-5, F-6, G-6
- 3) A-1, B-2, C-4, D-6, E-4, F-3, G-3
- 4) A-4, B-4, C-1, D-2, E-5, F-6, G-3

54

Սաղմնային զարգացման ընթացքում ո՞ր սաղմնային թերթից (նշված է աջ սյունակում) ո՞ր օրգանը, ո՞ր օրգան համակարգերն են (նշված է ձախս սյունակում) առաջանում: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

Օրգան, օրգան համակարգ

Սաղմնային թերթ

- A. տեսողության օրգան
- B. գլխուղեղ
- C. աղիներ
- D. լսողության օրգան
- E. հենաշարժիչ համակարգ
- F. արյունատար համակարգ
- G. սեռական օրգաններ

1. էկտոդերմ
2. էնտոդերմ
3. մեզոդերմ

- 1) A-3, B-2, C-1, D-1, E-2, F-3, G-1
- 2) A-1, B-2, C-3, D-3, E-1, F-1, G-2
- 3) A-2, B-1, C-3, D-3, E-3, F-2, G-3
- 4) A-1, B-1, C-2, D-1, E-3, F-3, G-3